

Յ Ե Ի Ե Լ Ո Ի Ե Օ



ԹԻԻ 5, 31 ՄԱՅԻՍ 1867

ՁԵՅԹՈՒՅՈՒ ԵՐԵՔ ԻՇԻԱՆԱՑ ՊԵՐԱԳԱՐՁԸ

ՀԱՅ լրագիրք փութացին ուրախութեամբ հրատարակել հասարակութեան Օ էյթինու մնացեալ երեք իշխանաց վերադարձը, որոնք իրենց քաղաքական նեղ վիճակէն ստիպեալ Հրատարակչական հայոց եղբայրութեանն օգնութիւն գտնելու յուսով կրօնափոխութեան դիմած էին: Յիշեալ լրագիրք անոնց վերադարձին պատճառէն թաղերն իրենց յուսացած օգնութիւնը չգտնելին, որ կերպիւ մի մարդկային անձնասիրութեան գաղտնի լսել է: Անք անոնց կարծեաց հաւամբ չեմք յայտ մատնել. յուսահատութիւնը չէր զերեք կրկին իրենց մայրենի եկեղեցւոյն ծոցը դարձնողը. իրենց ակնկալութիւնը Վեր. Հասունեանին վերայ էր. և որովհետեւ նա դեռ դարձած չէ իւր ուղեւորութենէն և հաւանական է որ կարենար նա պատկել անոնց իղձն ու ակնկալութիւնները որով և իցէ կերպիւ. սուտի յիշեալ յարգոյ իշխանաց վերադարձն սերիշ շարժառիթ սխալ ունենայ անշուշտ:

Եթէ պահ մի մտածելու լրագիր Օ էյթինու ժողովրդեան կրօնական գգացմունքը, նոցա իրենց մայրենի Վիկեղեցւոյն սր աստիճանի սերտ կապով մի կապուած ըլլալը, նոցա ի մանկութենէ ծծած հոգեւոր կաթին անարատութիւնը, շուտով պիտի համազուխք սր աշխարհային և մարմնական դէպք մի սրբան ալ սաստիկ ծանրանալու ըլլայ նոցա մտքին ու սրտին վերայ, և մինչև կրօնական սրբացութեան վտանգի մէջ ալ ձգելու ըլլայ, եթէ միջոց ունին պահ մի առանց կրից և ինքնիրեն նուէն սովորուած մտածելու մայրենի Վիկեղեցւոյ գութն ու գորովը, որով իրենց հոգին սնաւ և ուսիկ ընդունեցին իրենց հոգեկան կեանքը, փոխարէն տալով անոր իւրեանց հաւատքը իւր գրաւական, անհնարին է որ Վիկեղեցւոյ բնակիչ մը, Ռուբինեան հարատարակչէն մնացեալ ժողովուրդ մի չզգայ իւր սրտին մէջ նոյն գորովն արժէքն և շնորհասարտութեան գգացումը: Այս է անշուշտ վերոյիշեալ

Օ էյթինցի երեք իշխանաց վերադարձին գլխաւոր շարժառիթը, և ոչ թէ ակնկալած օգնութիւնն և պաշտպանութիւնը չգտնելէն յառաջ եկած յուսահատութիւնն է, ինչպէս կարծած են ազգային շրագիրք :

Արկորոգ շարժառիթ և պատճառնոցս վերադարձին կը համարձակիմ այսօր ընդհանուր ազգիս գիմնայն յայտնելով ըսել՝ թէ սուրբ Աթոռն և նորա Ամենապատիւ Աթոռակարն եղած է : Սուրբ Աթոռս՝ որ ազգային արդի տխուր և սպառնական վիճակին վերայ կարէ վեր վշտանալով կը մտնի, մանաւանդ գաւառաբնակ անխնամ և անտէրունջ ժողովրդոց յուսահատութենէ կրօնափոխութե գիմնելին տեսնելով իրեն սրտին իրաւացի կսկիծ և զած է, չկրցաւ անտարբեր աչօք նը կասել Օ էյթինցւոց ոմանց ի հռոմէականութիւն գիմնելին . և նոյն օրէն ի վեր կը մտածէր միջոց մի գտնել իւր ջանքերն ի գործ դնելով՝ կրկին զիրենք իրենց մայրենի Ակեղեցւոյն գիրկը դարձնելու համար : Իւր ջանքերն պարտազէլան, սրբոյն Արիգորի աղօթիցն ու բարեխօսութեանը մատահացած՝ կրցաւ ձեռք բերել աստուածային յաջողութեամբ իւր ցանկացած նպատակը, ինչպէս որ Պօլսոյ շրագիրք և մեր փոխանորդարանին կողմէն կ'իմացնեն մեզ :

Ահաւասիկ Ամեն . Սրբազան Պատրիարք Հօր գտած միջոցը : Մահտեսի Յովակիմ անուն Օ էյթուենցի կորիճ ջորեպանը, որ ամեն տարի Ս . Աթոռս կուգայ ջորեպանութեան գործքով, այս տարի դարձեալ եկած ըլլալով, և Ամեն . Սրբազանը նորա բարեպաշտութիւնը և գործունէութիւնը և իւր քաղաքակցոց քով ունեցած մեծ ազդեցութիւնը լաւ գիտնալով, կը կանչէ իւր քովը, և իւր միաբը կը յայտնէ

անոր : Յովակիմ թէպէտ և կը խոստանայ Սրբազան Հօր խնդիրքը Աստուծոյ ողորմութեամբ յաջողութեամբ կատարելու կարող ըլլալը, սակայն Պօլսոյ ծանապարհորդելու համար կարեւոր ծախուց ձեռքը բաւական չըլլանալ կը յայտնէ : Ամեն . Պատրիարքը ոչ միայն նորա ծամբու ծախքը, այլ և իւր այս առաքինութիւնը և հայրենասիրական եւ աստուածահաճոյ աշխատութիւններն ալ վարձատրել խոստանալով կը իրկէ զինքը ի Ա . Պօլսոյ զինի սուրբ Օտակի :

Յիշեալ երեք իշխանը մահտեսի Յովակիմի բարի յորդորանքներով ազգային Ակեղեցւոյ ճնորդական գութն ու բարիքները յիշելով, և անկէ իրենց ծծած հոգեւոր կաթին հարազատ մտալու պարտաւորութիւնը զգալով, մանաւանդ յիշելով Առաքելոյն խօսքը, թէ յոր կոչումն կոչեցար ի նմին կայցես, կը վերադառնան կրկին ի հնազանդութիւն] ուսաւորչական ուղղափառ սրեկեղեցւոց : Պօլսոյ սուրբ Արուսապէմի փոխանորդարանը ինչպէս նախ ի պատիւ Ազգին զիրենք շահած էր աւմիսներով սուրբ Աթոռոցս ծախքովը կերակրելով, նոյնպէս հիմայ թէ ի պատիւ Ազգիս և թէ ի շնորհս Օ էյթինուօրհնեալ ժողովրդոց և յիշեալ երեք յարգոյ իշխանաց բազկատարած կ'ընդունի զիրենք, և պիտի շահի հոգեւորապէս՝ որչափ ժամանակ որ հարկ ըլլայ մնալ ի Պօլսոյ :

Այսու ամենայնիւ Ազգ . Պարջութիւնը և Պատրիարքական իշխանութիւնը անշուշտ իրենց պարտաւորութիւնները ծանչնալով և անոնց վերադարձը յուսահատութեան հետեւանք չհամարելով, պիտի փութան ինչպէս կը յուսամք, հայրաբար իրենց խնամքն նոցա ընց տալ, և իրենց ազդեցութիւնը ի գործ դնելով՝ Օ էյթինուօրհնեալ և

բարեմիտ ժողովրդոց վիճակին բառ կարի օգնել, որչափ որ կը ներքին ներկայ ժամանակիս պահանջմունքները : Այս կերպով կը յուսամք որ նոցա կրօնափոխութեան դիմելնին առաջին և վերջին կըլլայ . ապա թէ ոչ յետինն վնիչարքան զառաջինն , զոր Տէր մի աբայց :

Մահտեսի Յովակիմի ազգասիրական գործը նշանաւոր է և արժանի տոհմային պատմութեան . իւր օրինակ քաջութիւնը յաջորդ թուով կը խոստանամք հրատարակել :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Պաշտօնախոսութիւնք :

Սուրբ Աթուոյս տեղական պաշտօններու մէջ ներկայ տարւոյս եղած փոփոխութիւնները հետեւեալներն են :

Սուրբ Նինգեան վանաց տեսուչ Արժ . Սրբային վարդապետին յաջորդեց Արժ . Ախրակոս վարդապետը Ալիպօլցի : Աւելի սուրբ Վէրդայ վանաց տեսուչ Արժ . Յովհաննէս վարդապետին տեղ բնարուեցաւ Արժ . Խարէն վարդապետը Միխիթարեան : Սուրբ Աստուածամօր գերեզմանի տաճարին տեսուչ Արժ : Ստեփան վարդապետին Աղբիանու պօլսեցւոյ յաջորդեց Արժ . Բարդողիմէոս վարդապետը Սալաթիացի : Արժ . Ալիբեմ վարդապետին , որոյ վերայ է վանքի խահանոցին անտեսութիւնը և շինուածոց վերակացութիւնը , իրեն յանձնեցաւ նաև ծովանէի տեսչութիւնը՝ փոխանակ Ախրակոս վարդապետին : Իսկ մնացեալ տեսչութիւնները , այն է՝ Վաճակոսի , Պէրութի , Յոսպէի , Վարդարից և Ախպրոսի եկեղեցեաց , մնացին դարձեալ իրենց նախորդ տեսչաց վերայ :

— Վաղարիս կոյսերական բանակին զորապետ Վսեմ . Վ իվա փաշայի , և Միրալայ Ալի պէկի տուած զինուորական հացկերութի նկարագրութիւնը՝ զոր մայիս ամսոյ մէջ հրատարակեցինք , ի խնդրոյ ամանց բաժանորդաց քաղաքիս՝ անոր գաղղիներէն ալ այս անգամ՝ Յաւերուածիս մէջ կը փութամք հրատարակել :

A l'occasion d'une revue militaire.

Son Excellence Liva Pacha et Miralay Ali-Bey ont donné des banquets aux troupes impériales stationnées dans notre ville. L'un a eu lieu aux 14 du mois courant (Mai), et l'autre six jours après. Le festin donné par M. Miralay a été surtout éclatant; car outre le corp militaire, et les personnes dignitaires politique et religieux de l'Islamisme, y ont été aussi invités les Consuls des Puissances européennes, avec leur suite, et les Chefs des Communautés chrétiennes. Ceux-ci ont été représentés par leurs Dragomans. Les banquets été préparés hors de la porte de Damasque, sur des gazons fleuris et verdoyants, où étaient dressées des tentes pour le corps dignitaire. Il y avait préparé deux tables, l'une pour les Chefs des Communautés chrétiennes, et pour Mess. les Consuls, où présidait S. Exc. Nazif Pacha, et l'autre pour les Efendi et pour les notables de la ville, étant le premier siège occupé par le Mufti. Avant de se mettre à table, a eu lieu un exercice militaire, aussi magnifique, que frappant, dans lequel les troupes Ottomanes ont donné des preuves de leur adresse et habileté. Beaucoup de monde y assistait; et cette solennité contribua à augmenter la considération et l'estime de tous pour Mess. S. Excellence Liva Pacha et Miralay Ali-Bey.

— Le Dragoman du Couvent Latin M. Pio d'Alonse, en récompense de ses bons services, a reçu récemment deux décorations. Une de l'ordre des Sts Maurice et Lazar du Gouvernement Italien; et l'autre de l'Autriche, savoir, la Croix d'or du mérite de l'Empereur François Joseph. Les deux décorations lui ont été conférées avec solennité, et satisfaction de tout le monde.

— Վախընթաց թուով իմացուցինք թէ Ֆիթիշի Վսեմ . Իպրահիմ փաշայի մահը , որ յատկապէս իրկուած էր քաղաքիս նախորդ կառավարիչ Իզզէթ փաշայի գործոց բնութեանը համար՝ Աորս մահուան լուրը հեռապրս :